

ԱՇՈՒՂԻ ԵՐԳԵՐԻՑ

1

Ի Մ Ս Ա Ջ Ը

Սազ եմ առել,
Աշուղ դառել,
Սիրտ եմ դրել իմ սազում:
Սրբաի վերք եմ,
Սրբաի երգ եմ
Սազիս ձէնով ձեզ ասում:..

Ձեզ անհատնում
Դարդ եմ պատմում,
Դուգուն-դարդ կայ իմ սազում:
Է՛ն եմ երգում,
Ի՛նչ կայ կեանքում—
Կեանքի երգ եմ ձեզ ասում:..

2

Մ Օ Ր Դ Ա Ր Դ Ը

—

Եւ սիրտ տուէք, որ դիմանամ
Գըլխիս ընկած ժեռ քարին,
Եւ մահ տուէք, որ չիմանամ
Ազիզ բալէս ուր տարին...

Մեր չէն գեղը կըրակն առաւ,
Կըրակն ընկայ էն օրէն.
Գեղալ բալէս Թուրքը տարաւ...
Տոնըդ քանդուի, անօրէն:

Սե եմ հագել, սուգ եմ անում,
Վայ եմ տալի սե գըլխիս.
Քեզ եմ կանչում—ձէն չես հանում,
Ուր ես, ուր, իմ աչքի լիս...

Ա՛խ, սիրտ տուէք, որ դիմանամ
Գըլխիս ընկած ժեռ քարին.
Եւ մահ տուէք, որ չիմանամ
Ազիզ բալէս ուր տարին...

3

ԷՐՈՒԱԾ ՍԻՐՏ

Սըրտիս խորքում խոր ցաւ ունեմ,
Վայ, իմ ցաւին դեղ արէք.
Գլուխըս կորցրել, նոր ցաւ ունեմ,
Կորած գըլխիս տեղ արէք...

Աղջիկ տեսայ, անվարդի պէս,
Վարդ-յոյսերով սիրեցի.
Երգ ու վէրքըս, մարգարտի պէս,
Ոտքի տակը փռուեցի...

Բայց նա անցաւ, ականջ չարաւ,
Սիրտըս ընկաւ ցաւ ու կրակ.
Նա կըխճօրեց, միտիկ չարաւ—
Ի՞նչ էր փռած ոտքի տակ...

Սըրտիս խորում խոր ցաւ ունեմ,
Ա՛խ, իմ ցաւին ճար չը կայ.
Սըրտիս վըրէն ժեռ քար ունեմ,
Էդ քարն առնող եար չը կայ...

4

ՂԱՐԻՖԻ ԵՐԳԸ

Օ՛խտը տարով, ճխտը սարով,
Այ սիրեկան իմ աշխարհ,
Հեռացել եմ քեզնից լալով,
Ղարիբ ընկել սարէ-սար:

Կեանք եմ մաշում, սե օր քաշում,
Ընկած խալիսի դըռներին.
Քու սէրն է ինձ էրում, մաշում,
Հոգիս կը տամ էդ սէրին...

Կ'ուզեմ հողիդ կարօտն առնեմ,
Հող ու ջրիդ ես ղուրբան.
Բայց հնց անեմ՝ ճամբէդ բըռնեմ,
Բախտն է կապել իմ ճամբան...

Վայ ղարիբին—օրը՝ օր չի,
Վայով կեանքն է անցընում.
Դուրսը մեռնի, չօլում կորչի—
Ո՞վ է խեղճին հարցընում...

ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆ